# ՊՈԱԿ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 07/22

ք. Գյումրի «04» մարտի 2022 թ.

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ.Խաչատրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 368 950 /երեք հարյուր վաթսունութ հազար ինը հարյուր հիսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկըներկայացվելէառանցԱԱՀ-ի, ապապայմանագրումնշելիս «ներառյալԱԱՀ-ն» բառերըհանվումեն:*

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __2__ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

*[20] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:
Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.
1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.
8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով հսկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

«Ընտանիք»ՄՊՍԿ ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05504412
Հ/Հ 900018005554
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Տնօրեն՝ Ա. Մինասյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Գյումրու գեղարվեստական սրահ» ՍՊԸ
ք. Գյումրի Կիրովի 1
ՀՎՀՀ 05524666
Հ/Հ 2472600004240000
«Արդշինբանկ»ՓԲԸ Գյումրու մ/6

(ստորագրություն)
Տնօրեն՝ Հ. Խաչատրյան
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«04» մարտի 2022 թ. կնքված*
*ԸՆՏ-ՄԱ-ԱՊՁԲ 07/22 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| համարը | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | 3 | 4 | 8 | 10 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Մեղրամոմ** | | | | | | | | | | |
| 1 | 03142400 | Մեղրամոմ 22գր | Պինդ նյութ, նախատեսված է օգտագործել ոսկերչության մեջ շաղափման, լարածգման ժամանակ 22 գ | հատ | 500 | 500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 |
| | | Ընդամենը | | | | **500** | | | | | | |
| | | ***Կավ, ճենակավ*** | | | | | | | | | | |
| 2 | 14221100 | Կավ/սպիտակ | Սպիտակ, հրակայուն, փափուկ,պլաստիկությամբ օժտված նստվածքային ապար, որը նախատեսված է խեցեգործական իրեր, քանդակներ ծեփելու համար, թրծվում է 1230°-1270°C: | կգ | 1000 | 60000 | 60 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 20 | 20 | 20 |
| 3 | 14221100 | Կավ/կարմիր/ | Կարմիր, հրակայուն, փափուկ, պլաստիկությամբ օժտված նստվածքային ապար, որը նախատեսված է խեցեգործական իրեր, քանդակներ ծեփելու համար, թրծվում է 600°-900°C: | կգ | 800 | 8000 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | 3 | 3 | 3 |
| | | Ընդամենը | | | | **68000** | | | | | | |
| | | **Արծաթ** | | | | | | | | | | |
| 4 | 14521200 | Արծաթ /Ag/ | Նախատեսված է զոդանյութ և զարդեր պատրաստելու համար 999,9%: Սպիտակ, փափուկ մետաղ է, խտությունը՝ 10,50 գ/սմ³, հալման ջերմաստիճան 960,5 °C, կարծրությունը՝ 25 կգուժ/մմ² | գրամ | 450 | 4500 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 5 | 5 |
| | | Ընդամենը | | | | **4500** | | | | | | |
| | | **Մետաղյա հանքաքարեր և համաձուլվածքներ** | | | | | | | | | | |
| 5 | 14611120 | Արույր | Պղնձի հիմքի վրա երկու կամ ավելի | կգ | 6500 | 6500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 0,5 | | | 1 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | բաղադրիչներից ստացված համաձուլվածք է, որում լեգիրացնող հիմնական տարր է հանդիսանում ցինկը:<br>Խտությունը՝ 8300÷8700 կգ/մ3<br>Տեսակարար ջերմունակությունը при 20 °C-ի դեպքում՝ 0,377 կՋ·կգ−1·Կ−1<br>Տեսակարար էլեկտրական դիմադրությունը՝ (0,07-0,08)×10−6 Օհմ·մ<br>Արույրի հալման ջերմաստիճանը բաղադրությունից կախված հասնում է 880—950 °C. Ցինկի պարունակության մեծացման հետ հալման ջերմաստիճանն իջնում է: | | | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 6500 | | | | | | |
| | | **Հիմնական մետաղներ** | | | | | | | | | | |
| 6 | 14731100 | Ողորկման մածիկ /քրոմ 50գր/ | Կանաչ գույնի պինդ նյութ, նախատեսված է ոսկերչական իրերը փայլեցնելու համար 50գ | հատ | 2000 | 2000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | |
| | | Ընդամենը | | | | 2000 | | | | | | |
| | | **Բորիդներ** | | | | | | | | | | |
| 7 | 24311112 | Բուռա | Նատրիումի տետրաբորաթթու: Սպիտակ փոշիանման նյութ, նախատեսված է օգտագործել հալման, զոդման ժամանակ 50գ | փաթեթ | 500 | 500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 |
| 8 | 24311112 | Բորաթթու 50գր | Սպիտակ բյուրեղանման նյութ: Օգտագործվում է զոդման աշխատանքների և բուռաջուր ստանալու համար 50գ | փաթեթ | 500 | 500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 |
| | | **Ընդամենը** | | | | 1000 | | | | | | |
| | | **Կիտրոնաթթու** | | | | | | | | | | |
| 9 | 33691846 | Կիտրոնաթթու 30գր | Սպիտակ բյուրեղային նյութ, օգտագործվում է ոսկերչական իրերի լվացման համար, քաշը՝ 30գ | փաթեթ | 100 | 100 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 |
| | | **Ընդամենը** | | | | 100 | | | | | | |
| | | **Կահավորանք** | | | | | | | | | | |
| 10 | 39241260 | Ռետինե 12,5սմ կլոր/կամ թեք քթով | Ռետինե 12,5սմ կլոր/կամ թեք քթով | հատ | 2200 | 6600 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | 1 |
| 11 | 39241260 | Բռնիչ /ռետինե/ | Երկարություն - 135 մմ, լայնություն - 16 մմ, բացվածք – 10մմ | հատ | 4000 | 4000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | |
| 12 | 39292150 | Ձողակարկին /штангель/ | Առավելագույն չափման հնարավորությունը 125մմ, թույլատրելի շեղումը 0.05մմ: | հատ | 8500 | 8500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | /штангель/ | | | | | | | | | |
| 13 | 39221320 | Գրտնակ N4 | Գլանաձև խոհարարական գործիք՝ նախատեսված խմորը հարթեցնելու և շերտի վերածելու համար: Հիմնականում պատրաստվում է փայտից՝ բռնակներով գլանի տեսքով: գրտնակ 13*3,5սմ, քաշը 100 գրամ | հատ | 1400 | 2800 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 |
| 14 | 39221320 | Գրտնակ N2 | Գլանաձև խոհարարական գործիք՝ նախատեսված խմորը հարթեցնելու և շերտի վերածելու համար: Հիմնականում պատրաստվում է փայտից՝ բռնակներով գլանի տեսքով: գրտնակ 13*3,5սմ, քաշը 100 գրամ | հատ | 1350 | 2700 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | 1 | |
| 15 | 39298200 | Շրջանակ ներքին 21սմ*16սմ | Նկարի շրջանակ ներքին փշատերև տեսակի փայտանյութից , հղկված 2սմ*21սմ*16սմ չափերով | հատ | 1200 | 4800 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 16 | 39298200 | Շրջանակ ներքին 40սմ*30սմ | Նկարի շրջանակ ներքին փշատերև տեսակի փայտանյութից , հղկված 2սմ*40սմ*30սմ չափերով | հատ | 1800 | 7200 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 17 | 39298200 | Շրջանակ արտաքին 28սմ*24սմ | Նկարի շրջանակ արտաքին ՄԴՖ պրոֆիլից, տարբեր երանգավորումներով, տարբեր ձևավորումներով 28*24սմ | հատ | 2100 | 8400 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 18 | 39298200 | Շրջանակ ներքին 59,4սմx84,1սմ | Նկարի շրջանակ ներքին փշատերև տեսակի փայտանյութից , հղկված 2սմ*29,4սմ*84,1սմ չափերով | հատ | 2400 | 9600 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 19 | 39298200 | Շրջանակ արտաքին 45սմ*35սմ | Նկարի շրջանակ արտաքին ՄԴՖ պրոֆիլից, տարբեր երանգավորումներով, տարբեր ձևավորումներով 45*35սմ | հատ | 2600 | 10400 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 20 | 39298200 | Շրջանակ ներքին 59,4սմx84,1սմ | Նկարի շրջանակ ներքին փշատերև տեսակի փայտանյութից , հղկված 2սմ*59,4սմ*84,1սմ չափերով | հատ | 2400 | 9600 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 21 | 39298200 | Շրջանակ արտաքին 65,2սմ*90սմ | Նկարի շրջանակ արտաքին ՄԴՖ պրոֆիլից, տարբեր երանգավորումներով, տարբեր ձևավորումներով 65,2*90սմ | հատ | 4200 | 16800 | 4 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | | 2 |
| 22 | 39298200 | Շրջանակ կտավով/30*40 | Փայտե շրջանակ 100% բամբակ / 280գ/մ2 30*40սմ/ ներկված կտավով | հատ | 1800 | 9000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 5 |
| 23 | 39298200 | Շրջանակ կտավով/25*30 | Փայտե շրջանակ 100% բամբակ / 280գ/մ2 25*30սմ/ ներկված կտավով | հատ | 1600 | 8000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 5 |
| | | Ընդամենը | | | | **108400** | | | | | | |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Չորանյութեր | | | | | | | | | | |
| 24 | 44311190 | Ֆլյուս 30գր | Սպիտակ փոշիանման նյութ, նախատեսված է օգտագործել հալման, զոդման ժամանակ 30գ | հատ | 1500 | 1500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 |
| | | Ընդամենը | | | | 1500 | | | | | | |
| | | Գործիքներ , փականներ , բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ | | | | | | | | | | |
| 25 | 44511400 | Խոզանակ արույրից Փ-22մմ | Մետաղական սկավառակի վրա ամրացված արույրից մանրաթելերով կլոր գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար Փ-22մմ | թերթ | 550 | 1100 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | 1 |
| 26 | 44511400 | Խոզանակ պողպատից Փ-20մմ | Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,պողպատից մանրաթելերով /6մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 20մմ | թերթ | 750 | 1500 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 |
| 27 | 44511400 | Խոզանակ մազե Փ-26մմ | Մետաղական սկավառակի վրա ամրացված՝ կլոր,մազե սպիտակ փափուկ մանրաթելերով /7մմ երկարությամբ և 0,08մմ տրամագծով/ գործիք՝ պատրաստված իրերը մշակելու համար տրամագիծը 26մմ | թերթ | 550 | 1100 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 |
| 28 | 44511400 | Նրբախարտոց ոսկերչական /6հատ/ | Նրբախարտոցները օգտագործվում են խարտման աշխատանքների ժամանակ, տարբեր պրոֆիլների /կլոր, կիսակլոր, քառակուսի, եռանկյուն, տափակ, օվալ/ /№-0-3/ | հատ | 3700 | 7400 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 1 |
| 29 | 44511220 | Հալքանոթ /արծաթի/ №3 | Թրծված կավից /սպիտակ/ աման մետաղը հալեցնելու համար Փ-55մմ, բարձրությունը՝ 22 մմ: N3 | հատ | 450 | 2250 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 4 |
| 30 | 44511220 | Հալքանոթ Փ-55մմ | Թրծված բարձր ջերմակայունությամբ կավից տարա մետաղը հալեցնելու համար Փ-55մմ, բարձրությունը՝ 22մմ | հատ | 550 | 2750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 4 |
| 31 | 44511400 | Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-24մմ | Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /բամբակյա փափուկ/Փ-24մմ ամրացված մետաղական հիմքի /Փ-10մմ/ վրա | հատ | 600 | 1800 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 2 |
| 32 | 44511400 | Թաղիքե սկավառակ բոր մեքենայի /պուշոկ/ Փ-25մմ | Ամրացված մետաղական հիմքի վրա:Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /թաղիքե | հատ | 600 | 1800 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | 2 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | կոշտ/ հաստությունը՝ 7մմ, տրամագիծը՝ 25մմ | | | | | | | | | |
| 33 | 44511400 | Թաղիքե սկավառակ փայլեցման սարքի /պուշոկ/ Փ-80մմ | Ամրացված մետաղական հիմքի վրա:Նախատեսված է փայլեցման աշխատանքներ իրականացնելիս /թաղիքե կոշտ/ հաստությունը՝ 7մմ, տրամագիծը՝ 80մմ | հատ | 1350 | 4050 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | 1 |
| 34 | 44511340 | Գայլիկոն Փ-0.6մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 0.6մմ | հատ | 400 | 2000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 35 | 44511340 | Գայլիկոն Փ-0.8մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 0.8 մմ | հատ | 400 | 2000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 36 | 44511340 | Գայլիկոն Փ-1.0մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 1.0 մմ | հատ | 400 | 2000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 37 | 44511340 | Գայլիկոն Փ-1.2մմ | Գայլիկոն P18, տրամագիծը 1.2 մմ | հատ | 500 | 2500 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 38 | 44511340 | Բոռչիկ կլոր Փ-1,5մմ | Բոռչիկ կլոր Փ-1,5մմ | հատ | 550 | 2750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 39 | 44511340 | Բոռչիկ կլոր Փ-1,75մմ | Բոռչիկ կլոր Փ-1,75մմ | հատ | 550 | 2750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 40 | 44511340 | Բոռչիկ կլոր Փ-2մմ | Բոռչիկ կլոր Փ-2մմ | հատ | 550 | 2750 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
| 41 | 44511340 | Բոռչիկ ուղիղ 0,6մմ | Բոռչիկ ուղիղ 0,6մմ | հատ | 600 | 3000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | 2 |
